


Ս'եծն Ս' արդան իր քաջ նիզակակից-ներովը՝ ի սէր հաւատոյ և ի պաշտպա-նութիւն հայրենեաց : Պարծենալով պիտի ըսեն Ռիւրակնեան լեռինք՝ թէ մեր վրայ ստեղծուեցաւ դրախտը . անդիէն բարձրէն խրոխտալով պիտի գոչէ Մարարատ թէ իմ վրաս իջաւ տապա-նը , ես եմեղած մարդկու թէ երկրորդ դրախտը . այսպէս բոլոր Հայաստան պիտի ցնծայ , և իրեն ինտումը զմեզ պիտի զօրացնէ մեր բանասիրական

և հայրենասիրական ջանքը շարունա-կելու . որուն համար չէ թէ միայն մեր ազգը մեզի երախտապարտ պի-տի ըլլայ , հապա օտաւ ազգեր ալ զմեզ պիտի գովեն որ մեր հայրենա-սէր փափաքը այսպիսի օգտակար , անմեղ , խաղաղական և աշխարհաշէն ջանքով կը պսակենք :

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԾԵՊԵՃԵԱՆ

ԱՇ. Ռ. Վ.



Պերսեպոլիս :

ՐԵՒԵԼԵԱՆ հնութիւնները մաս-նաւոր կերպով սէր ու զարմանք կը բերեն մեզի , մանաւանդ մեր հայրե-նեացը դրացի կամ մօտիկ քաղաքնե-րուն աւերակները : Այսպիսեաց մէկն է նաև Պերսեպոլիս , որ ատենով Պարսկաստանի մայրաքաղաքը , ու-

արևելեան մատենագրաց և մեր նախ-նեաց Սաակը ըսած հռչակաւոր քա-ղաքն էր , Արասիս ու Կուր գետերուն իրարու հետ խառնուած տեղը՝ ընդ-արձակ դաշտի մը մէջ : Հիմա անոր աւերակները պարսկերէն Չիւ-Սիւս կ'ըսուին , որ բառացի սիւս կը նշա-

նակէ . վասն զի պալատի մը սիւները ինչուան հիմա կեցած են աւերակներուն մէջ . միայն թէ հիմա քառասունին տեղը հազիւ թէ ինը հատ մնացեր են : Ըս սիւները մոխրագոյն մարմարիոնէ են, տրամագիծնին հինգ ոտնաչափ , ու բարձրութիւննին գրեթէ եօթանասունուերկու ոտնաչափ : Պերսեպոլի աւերակներուն մէջ գրեթէ միայն աս պալատին սիւներն են որ մնացեր են . ուրիշ ամենեւին չենք կամ հնութիւն չերենար : Հիմակուան Պարսիկները Պերսեպոլի աւերակներուն թափի շէնքի ալ կ'ըսեն , ու աւանդութիւն ունին թէ իրենց Նիմիտ թագաւորին շինած քաղաքն է եղեր :

Պերսեպոլի աւերակներուն հիւսիսային կողմը լեռ մըն ալ կայ որ պարսկերէն Վախշի Իւսթէճ կ'ըսուի : Ընկայ իրեք հարիւր կանգունէն աւելի բարձրութեամբ ճերմակ մարմարիոնէ ժայռ մըն է . ու զարմանալին աս է որ վրան լեցուն են զանազան փորուածքներ ու քարանձաւներ , որ անշուշտ մեծամեծաց գերեզմաններ են եղեր : Ըս լեռան պատկերն է հոս դրածնիս :

Յունաց պատմիչներուն ըսածին նայելով , մեծին Բլէքսանդրի ժամանակը Պերսեպոլի մէջ մեծ պալատ մը կայ եղեր , ու Պարսից թագաւորները իւրօրոսի առնէն 'ի վեր անբաւ զանձ գիշեր են եղեր անոր մէջ . աս պալատը ու քաղաքին մէկ մասը այրեր է մեծն Բլէքսանդր . վասն զի ինչպէս որ Յունաց ողորկ պատմութիւններուն մէջ կը կարգանք , Բլէքսանդր Պերսեպոլիսը առնէլէն ետեւ , իր կանանց մէկը Տայիս անունով՝ ան պալատին մէջ կոտորտուելով քալած ժամանակը ըսած ըլլայ յունական թեթեւութեամբ կամկանացի հպարտութեամբ մը թէ՝ « Ինչ աղէկ բան կ'ըլլար որ աս Վսեքսեսի պալատը մոխիր դարձնէինք , ինչպէս որ ինքը

մեր Բլէքսը այրեց մոխիր դարձուց . ու մեր ետեւէն եկողներն ըսէին թէ քաջ զորավարներուն ընել չկրցածը կնիկ մարդուն մէկը ըրաւ , այսինքն Բլէքսին վրէժը Պերսեպոլիսէն առաւ » : Բլէքսանդր ալ գինով ըլլալով՝ մէկէն ջահը ձեռք առաւ , կրակ տուաւ պալատին ու քաղաքին , մոխիր դարձուց :

ԶՈՒՄԻՃԱՅԻ ԴԻՊՈՒԱԾՆԵՐ

Իէս գեորգիւն արհամարհող է՝ ըլլայ :

ՍԱՐԴՈՒՆ մէկը կ'ուզէ եղեր ձի մը գնել . կը հարցընէ իր բարեկամներէն մէկուն թէ ձիուն տարիքը ինչէն կ'իմացուի . « Ինչուաներէն » կ'ըսէ բարեկամը : Երբ(այ աս մարդը ձի ծախողին՝ ձի մը հանէ կ'ըսէ . « անիկայ ալ գեղեցիկ մարդուկ մը կը բերէ գիմացը : Ը ուտ մը ասիկայ ձիուն բերանը կը բանայ , ու լաւ մը նայելէն ետքը՝ արհամարհութեամբ ետ կը հրէ ձին , ու կ'ըսէ տիրոջը . « Ըս ձիդ քեզի ըլլայ . երեսունուերկու տարեկան է » : Զիուն ահաւաները համրեր է եղեր :

Իժեբերան օրինակ :

ՊԱՐՍԻՅ Իսլաիւրուան թագաւորը օր մը որսի ելած ըլլալով , բռնած որսէն քիչ մը բան ուտել ուզեր է , բայց աղչկայ եղեր . կը խրկէ մարդիկն որ մօտիկ գեղէն առնեն բերեն . միայն թէ գինն ալ վճարեցէք կ'ըսէ : Երբ հարցընեն ծառաները թէ կտոր մը աղին գինը թագաւոր մը չվճարէնէ ինչ կ'ըլլայ :— « Թէ որ այսօր թագաւոր մը իր հպատակներէն մէկուն պարտեղէն խնձոր մը փրցընէ , վաղը իր իշխանները ան պարտիզին ծառերը կը կտրեն » կ'ըսէ նուիրուան :